ՔԱՂՎԱԾՔ

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝
2023 թվականի նոյեմբերի 30-ի, ժամը 14:00-ի նիստի
N 5 արձանագրությունից

ԼՍԵՑԻՆ.- **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով** հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մերի Վազգենի Բաղալյանի** ռեկտորին ուղղված դիմումի մասին հարցը («Առավոտ» օրաթերթ, 10.10.2023, N 175 (6947)):

Զեկուցողներ՝ ռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Դ.Ռ.Գալոյան** և գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի նախագահ, միջազգային տնտեսական հարաբերությունների ամբիոնի վարիչ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Ա.Ա.Մկրտչյան**:

Զեկուցողները նշեցին. «Առավոտ» օրաթերթի 2023 թվականի հոկտեմբերի 10-ի N 175 (6947)) համարում **հայտարարվել է մրցույթ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար**, որին կարող են մասնակցել տնտեսագիտության դոկտորի կամ թեկնածուի գիտական աստիճան, պրոֆեսորի կամ դոցենտի գիտական կոչում ունեցող անձինք, որոնք ունեն առնվազն 10 տարվա բուհական գիտամանկավարժական աշխատանքի ստաժ: Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով 2023 թվականի հոկտեմբերի 24-ին ռեկտորին դիմում է ներկայացրել հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ **Մերի Վազգենի Բաղալյանը**: Ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությամբ և «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգով» սահմանված պահանջներին համապատասխան ներկայացրել է անհրաժեշտ փաստաթղթերը:

Դոցենտ Ա.Ա.Մկրտչյանը նշեց. Մ.Վ.Բաղալյանը ծնվել է 1972 թվականի փետրվարի 29-ին Երևանում: 1979-1989 թթ. սովորել և ավարտել է Երևանի Վ.Տերյանի անվան N 60 միջնակարգ դպրոցը: 1989-1994 թթ. սովորել և ավարտել է Երևանի ժողովրդական տնտեսության ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան) կառավարման ֆակուլտետի լրիվ դասընթացը «Աշխատանքի տնտեսագիտություն և սոցիոլոգիա» մասնագիտությամբ՝ ստանալով տնտեսագետի որակավորում: 1996-2001 թթ. եղել է հայցորդ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում:

2005 թվականին Մ.Վ.Բաղալյանը պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Բարձրագույն կրթության զարգացման նյութական խթանման կատարելագործման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով Ը.00.02՝ «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ և ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2006 թվականին ՀՀ ԲՈՀ-ի կողմից նրան շնորհվել է դոցենտի գիտական կոչում «Տնտեսագիտություն» մասնագիտությամբ: Մ.Վ.Բաղալյանը ունի տվյալ բնագավառում հրատարակված գիտական և ուսումնամեթոդական աշխատանքներ, որոնց ընդհանուր թիվը 57 է (2 մենագրություն, 2 կոլեկտիվ մենագրություն, 1 դասախոսությունների տեքստ (համահեղինակությամբ), 52 գիտական հոդված:

Աշխատանքային գործունեությունը: Մ.Վ.Բաղալյանը 03.04.1995 - 26.08.1998 աշխատել է Երևանի թեթև արդյունաբերության տեխնիկումում որպես տնտեսագիտական առարկաների դասախոս, իսկ 26.08.1998 - 2007 թթ՝ համատեղության կարգով: 1998 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր Մ.Վ.Բաղալյանը աշխատում է համալսարանի աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում. նախ՝ 01.09.1998 - 31.08.1999՝ ասիստենտ-ստաժավորող, այնուհետև՝ 01.09.1999 - 30.08.2001՝ ասիստենտ, 01.09.2001 - 31.08.2006՝ դասախոս, 01.09.2006 - 31.08.2007՝ ասիստենտ, 01.09.2007 - 28.08.2011՝ դոցենտ: 29.08.2011 - 01.05.2017 եղել է կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ, 02.05.2017 - 22.11.2018՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի ժամանակավոր պաշտոնակատար, իսկ 2018 թվականի նոյեմբերի 23-ից հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանն է: Միաժամանակ, որպես դոցենտ, Մ.Վ.Բաղալյանը 01.09.2011 - 30.06.2021 համատեղությամբ դասավանդել է աշխատանքի տնտեսագիտության ամբիոնում, իսկ 2021 թվականի սեպտեմբերի 1-ից առ այսօր՝ բիզնես վարչարարության ամբիոնում:

Ամուսնացած է, ունի 2 որդի և 1 թոռ:

Դոցենտ Ա.Ա.Մկրտչյանը նշեց, որ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհրդի 2023 թվականի նոյեմբերի 17-ի նիստում (արձանագրություն N 4) քննարկվել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին դիմած հավակնորդ Մ.Վ.Բադալյանի՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 13-րդ կետի համաձայն ներկայացրած ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագրի, հավակնորդի մասնագիտական բնութագրի և դեկանի պաշտոնին հավակնորդի համապատասխանության մասին հարցը: Նիստը նախագահել է ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Ա.Վ.Գրիգորյանը: Նա ներկայացրել է Մ.Վ.Բադալյանի անցած աշխատանքային ուղին՝ շեշտադրելով, որ փաստաթղթերում նրա ներկայացրած տեղեկատվությունն արժանահավատ է և զբաղեցնելով հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի պաշտոնը, նա մշտապես վայելում է պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների սերն ու հարգանքը: Այնուհետև Մ.Վ.Բադալյանը ներկայացրել է հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը, դրա հիմնական դրույթները և նպատակը՝ նշելով, որ այն պետք է համահունչ լինի համալսարանի զարգացման տեսլականին: Հավակնորդի վերաբերյալ դրական կարծիքներով ելույթ են ունեցել պրոֆեսոր Լ.Հ.Գրիգորյանը, դոցենտներ Ս.Ծ.Ղազարյանը, Ա.Հ.Սարգսյանը: Մասնավորապես՝ Լ.Հ.Գրիգորյանն ընդգծել է, որ Մ.Վ.Բադալյանի պաշտոնավորման տարիների ընթացքում ֆակուլտետում գրանցվել է կայուն առաջընթաց. նա մշակել է շատ հետաքրքիր ռազմավարություն, որի համաձայն՝ մի կողմում դրված է կարգապահության նկատմամբ խիստ վերահսկողությունը, մյուս կողմում՝ անձնակազմի նկատմամբ հարգալից վերաբերմունքը: Ուսումնական աշխատանքների նկատմամբ նա խիստ հսկողական է և առաջնորդվում է «խոսքը գործ է» սկզբունքով: Նրանք գոհունակություն են հայտնել Մ.Վ.Բադալյանի կատարած բարձր մակարդակի աշխատանքից՝ նշելով, որ նա օժտված է մարդկային բարձր որակներով: Նրանք նշել են նաև, որ դեկանի թափուր պաշտոնի հավակնորդը համապատասխանում է դեկանի պաշտոնին ներկայացվող պահանջներին և առաջարկել են Մ.Վ.Բադալյանի թեկնածությունը ներկայացնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Ելույթներից հետո դեկանի պաշտոնի հավակնորդի երաշխավորության մասին հարցը դրվել է ֆակուլտետի խորհրդի նիստի բաց

քվեարկությանը: Քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 10, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0, քվեարկությանը չի մասնակցել 1-ը) հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի խորհուրդը որոշել է, որ հավակնորդը համապատասխանում է դեկանի պաշտոնին, նրան տվել է բարձր գնահատական և երաշխավորել է նրա թեկնածությունը ներկայացնել համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար: Նաև միաձայն նախապատվություն է տվել միջնորդել համալսարանի գիտական խորհրդին՝ դեկանի պաշտոնում ընտրել Մ.Վ.Բաղալյանին:

Հարցը քննարկվել է նաև գիտական խորհրդին կից մրցութային հանձնաժողովի 2023 թվականի նոյեմբերի 24-ի, ժամը 14:00-ի նիստում (արձանագրություն N 21): Բաց քվեարկության արդյունքների հիման վրա (կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0) որոշվել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մերի Վազգենի Բաղալյանի թեկնածությունը ներկայացնել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար:

Զեկուցողներից հետո Մերի Վազգենի Բաղալյանը ներկայացրեց հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի գործունեության առաջիկա հնգամյակի ծրագիրը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Պրոֆեսորներ Դ.Ռ.Գալոյանը, Ա.Ս.Մելքումյանը, Հ.Գ.Մնացականյանը, Լ.Հ.Գրիգորյանը, դոցենտներ Լ.Վ.Բարխուդարյանը, Ա.Ա.Գրիգորյանը, Ա.Գ.Հակոբյանը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ գիտական խորհուրդը որոշեց Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի գործող դեկան, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մերի Վազգենի Բաղալյանի թեկնածությունը դնել գիտական խորհրդի փակ գաղտնի քվեարկությանը՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի համար հայտարարված մրցույթին մասնակցելու համար (որոշումն ընդունվեց բաց քվեարկությամբ, միաձայն. գիտական խորհրդի 60 անդամից նիստին ներկա էին 54-ը. կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0):

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հիմք ընդունելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի 2017 թվականի մարտի 17-ի նիստում (արձանագրություն N 7) հաստատված «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի դեկանի ընտրության ընթացակարգի» 34-րդ կետը, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի ընտրության նպատակով գիտական խորհրդի նիստում ընտրված հաշվիչ հանձնաժողովի նիստի N 2 արձանագրությունը և փակ գաղտնի քվեարկության արդյունքները (**կողմ՝ 53, դեմ՝ 0, անվավեր քվեաթերթիկ՝ 1**)՝ **Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնում համարել ընտրված տնտեսագիտության թեկնածու, դոցենտ Մերի Վազգենի Բադալյանին**:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Դ. Ռ. Գալոյան**

Գիտական խորհրդի քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2023 թ. նոյեմբերի 30
Երևան